



Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Նախագահությամբ դատավոր՝	Հ.Միքայելյանի
Քարտուղարությամբ՝	Ն.Մելքոնյանի
Մասնակցությամբ՝	
Հայցվոր՝	Ռ.Մադոյանի
Հայցվորի ներկայացուցիչ՝	Ի.Վանոյանի
Պատասխանող՝	Ա.Հովսեփյանի
Պատասխանողների ներկայացուցիչ՝	Ս.Մխիթարյանի
Երրորդ անձի ներկայացուցիչներ՝	Գ. Բաղդասարյանի
	Ա. Հախվերդյանի


2013թ. փետրվարի 27-ին, Գյումրիում, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Ռուզաննա Վանիկի Մադոյանի /հասցե՝ ք. Գյումրի, Լ.Մադոյան փող. տուն 64, անձնագիր՝ ԱՄ0544609, տրված 01.12.2011թ. 016-ի կողմից/, ընդդեմ Ալեքսան Խաչատուրի Մադոյանի (հասցե՝ ք. Գյումրի, Ս. Ճարտարապետի փող. 7/3 շենք, բն. 17, անձնագիր՝ ԱՖ0374635, տրված 30.07.2001թ. 016-ի կողմից/ , Անահիտ Վարազդատի Հովսեփյանի / հասցե՝ ք. Գյումրի, Ս.Ճարտարապետի փող. 7/3 շենք, բն. 17,անձնագիր՝ ԱՖ0592346,տրված 18.02.2003թ. 016-ի կողմից/, Արմինե Ալեքսանի Մադոյանի /հասցե՝ ք.Գյումրի Ս.Ճարտարապետի փող. 7/3 շենք, բն. 17, անձնագիր՝ ԱԳ0443211, տրված 10.03.2005թ. 016-ի կողմից/ և Խաչատուր Ալեքսանի Մադոյանի /հասցե՝ ք. Գյումրի, Ս. Ճարտարապետի փող. 7/3 շենք, բն. 17, անձնագիր՝ ԱԳ0638999, տրված 19.06.2006թ. 016-ի կողմից/, երրորդ անձ՝ Շիրակի մարզպետարան /հասցե՝ք.Գյումրի Գ.Նժդեհի 7/ բնակտարածության օգտագործման իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվորներ Ռուզաննա Վանիկի Մադոյանը, Աննա և Արսյոյն Հարությունի Մադոյանները /անչափահասների օրինական ներկայացուցիչ Ռուզաննա Մադոյան/ 15.11.2012թ. հայցադիմում է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Անահիտ Հովսեփյանի, Ալեքսան, Արմինե և Խաչատուր Մադոյանների, երրորդ անձ՝ Շիրակի մարզպետարան բնակտարածության օգտագործման իրավունքի խախտումը վերացնելու պահանջով:

Հայցադիմումը վարույթ է ընդունվել դատարանի 16.11.2012թ. որոշմամբ և նախնական դատական նիստը նշանակվել է 05.12.2012թ.:



ՊՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԻՆ
 Մտից թիվ 1372-13
 27. 02. 13.

Պատասխանողներ՝ Անահիտ Հովսեփյանը, Ալեքսան, Արմինե և Խաչատուր Մադոյանները ներկայացրել են հայցադիմումի պատասխան:

14.02.2013թ. դատարանը որոշում է կայացրել նախնական դատական նիստն ավարտելու և դատաքննության անցնելու վերաբերյալ:

Վճռի հրապարակման օր է նշանակվել 27.02.2013թ.:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվորը դիմելով դատարան հայտնել է, որ ինքն իր ընտանիքով, Վահան և Օվսաննա Մադոյաններն իրենց ընտանիքով, պատասխանողներից Ալեքսան Մադոյանը հանդիսացել են նույն ընտանիքի անդամներ և հաշվառված բնակվել են Գյումրի քաղաքի Երևանյան խճ. 93 շենքի, թիվ 22 բնակարանում:

1988թ. երկրաշարժի հետևանքով իրենց շենքը դարձել է վթարային, որի կապակցությամբ ընտանիքի 13 անդամներով, այդ թվում նաև Սիրուշ Ավետիքի Ղազարյանը /մահացել է 30.11.2001թ./, Անահիտ Վահանի Հովհաննիսյանը /ամուսնության կապակցությամբ բնակարանով ապահովվել է 2001թ./ համարվել են անօթևաններ և հաշվառվել անօթևանների հերթացուցակում:

Նկատի ունենալով իրենց ընտանիքի անօթևանի կարգավիճակը՝ Շիրակի մարզպետարանը 2000թ. դեկտեմբերի 25-ին իրենց նախկին ընտանիքի 14 անձին բնակության համար հատկացրել է Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետի փողոցի թիվ 7/3 շենքի թիվ 17 բնակարանը:

Երկրաշարժից անմիջապես հետո Հայաստանի Հանրապետությունում չունենալով բնակտարածություն ինքը և ամուսինը՝ Հարություն Մադոյանը իրենց երեխաների հետ 1989թ. հարկադրված էվակուացվել են ՌԴ եւ ժամանակավորապես բնակություն հաստատել այնտեղ: Ապա վերադարձել են Գյումրի, երեխաները շարունակել են կրթվել Հայաստանում:

Օսաննա և Վահան Մադոյաններն իրենց ընտանիքով երկրաշարժից անմիջապես հետո բնակվել են Գյումրի քաղաքի 221 տնակային տարածքի թիվ 058 տնակում: Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 09-ի վճռով Վահան Խաչատուրի Մադոյանը ընտանիքի անդամների հետ վտարվել է թիվ 221/058 տնակից, Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետի փողոցի 7/3 շենքի, թիվ 17 երեք սենյականոց բնակարանում բնակվելու: Վճիռը նույնպես վկայությունն է այն բանի, որ Տրդատ Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի, թիվ 17 երեք սենյականոց բնակարանը հատկացվել է իրենց 14 անձից բաղկացած ընտանիքին:

Շիրակի մարզպետարանի կողմից Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 բնակարանը անմիջականորեն հանձնվել է պատասխանողներից Ալեքսան Խաչատուրի Մադոյանին, որն այդ բնակարանում բնակեցրել է միայն իր ընտանիքին եւ օգտվելով հանգամանքից, որ իրենց հայցվորների ձեռքի տակ չկա բնակարանի հատկացման վերաբերյալ փաստաթուղթը՝ „բնակության թույլտվությունը,, իրենց պահանջով ներկայացրել է „բնակության թույլտվություն,, սակայն ոչ թե իսկականը, այլ 5 անձի համար տրված „բնակության թույլտվություն,, ,հայտարարելով, որ բնակարանն իր 1-ին խմբի հաշմանդամության կապակցությամբ հատկացվել է իր 5/հինգ/ անձից բաղկացած ընտանիքին:

Նկատի ունենալով, որ պատասխանողներն իրենց չեն թույլատրում բնակվել իրենց նախկին ընտանիքին հատկացված բնակարանում ինքր /Ռուզաննա Մադոյանը/ 2012թ. ապրիլ ամսվա սկզբին գրավոր դիմել է Գյումրու քաղաքապետին, որն էլ իր 10.04.2012թ. թիվ 1/4-09/1349 գրությամբ պատասխանել է, որ „Ձեր ընտանիքը հաշվառված բնակվել է Երևանյան խճ. 93 շենքի թիվ 22 բնակարանում, որը երկրաշարժի հետևանքով փլվել է: „Կարմիր խաչի,, կողմից վիճակահանությանը Ձեր ընտանիքին հատկացվել է Տ.Ճարտարապետ փող. 7/3 շենքի թիվ 17 բնակարանը և որպես բնակարանով փոխհատուցված հանվել էք երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանային հերթացուցակից: Ինչ վերաբերում է „Ձեր վերը նշված բնակարանի հատկացման որոշումը տրամադրելուն, հայտնվում է, որ Տ. Ճարտարապետի 7/3 շենքի բնակարանային գործերը գտնվում են Շիրակի մարզպետարանում, ուստի Դուք պետք է դիմեք Շիրակի մարզպետարան,,:

Որից հետո ինքը փաստաբանի միջոցով 29.05.2012թ. դիմել է Շիրակի մարզպետարան և ստացել բնակարանի հատկացման հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները, որոնցում եղել է նաև 25.12.2000թ. „բնակվելու թույլտվությունը,, 14 անձի համար և այն անձանց ցուցակը, որոնց հատկացվել է բնակարանը: Ընդ որում, այստեղ ևս Ա.Մադոյանը թույլ է տվել կեղծիք՝ երկրաշարժից հետո ծնված իր երեխաներին ներկայացնելով կարիքավորների ցուցակում, ցուցակից բաց թողնելով երկրաշարժից առաջ ծնված եւ բնակարանի կարիքավոր հանդիսացող իրենց երեխաների անունները:

Ըստ Շիրակի մարզպետարանի կողմից տրամադրված „բնակվելու թույլտվության,, իրենք հայցվորները հանդիսանում են Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 բնակարանի օգտագործման իրավունք ունեցողներ:

Փաստորեն պատասխանողները տարիներ շարունակ իրենց են ներկայացրել կեղծված „բնակվելու թույլտվությունը,, միայն 5 անձի համար, դրանով իրենց համոզել ու ապակողմնորոշել, որ բնակարանը հատկացվել է իրենց ընտանիքին, այն դեպքում, երբ բնակարանը հատկացվել է նաև իրենց հայցվորներին: Հինգ անձի համար տրված „բնակության թույլտվության,, կապակցությամբ ինքը՝ Ռ.Մադոյանը դիմել է Շիրակի մարզի դատախազին, սակայն քրեական գործ չի հարուցվել այն պատճառով, որ կեղծ „բնակության թույլտվությունը,, տված անձը արդեն մահացած էր, իսկ Ալեքսան Մադոյանը այդ „բնակության թույլտվությունը,, չէր օգտագործել:

Նկատի ունենալով, որ պատասխանողները խոչընդոտում են բնակարանի իրենց օգտագործման իրավունքի իրականացմանը՝ չեն թույլատրում բնակվել իրենց ևս հատկացված բնակարանում, դիմելով դատական պաշտպանության և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի և 277 հոդվածի պահանջներով խնդրել են վերացնել իրենց բնակարանի օգտագործման իրավունքի իրականացման խոչընդոտները՝ պարտավորեցնել պատասխանողներին արգելք չհանդիսանալ իրենց կողմից Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 բնակարանում բնակվելուն:

Գործի քննության ընթացքում հայցվոր կողմը պահանջը պնդեց:

3. Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Պատասխանողներ՝ Անահիտ Հովսեփյանը, Ալեքսան, Արմինե և Խաչատուր Մադոյանները եւ պատասխանողների ներկայացուցիչ Ս. Մխիթարյանը գործի

դատաբանությանը չեն մասնակցել, սակայն գործի նախնական դատական նիստերի ընթացքում, ինչպես նաև հայցադիմումի պատասխանում հայցը չեն ընդունել պատճառաբանությամբ, որ վիճելի Տրդատ Ճարտարապետի 7/3 շենքի թիվ 17 երեք սենյականոց բնակարանը հատկացվել է իրենց՝ հինգ անձից բաղկացած ընտանիքին երկրաշարժին կորցրած Երևանյան խճուղու 93 շենքի թիվ 22 երեք սենյականոց բնակարանի դիմաց:

Վիճարկելով հայցվորների կողմից Գյումրու քաղաքապետարանի բնակրաժնի պետի ստորագրությամբ ներկայացված փաստաթուղթը, որ վիճելի բնակարանը հատկացվել է 14 անձի համար, պատասխանողները ներկայացնում են նմանատիպ գրություն վիճելի բնակարանը 5 անձի հատկացնելու վերաբերյալ: Միաժամանակ ներկայացնում են նույն բնակրաժնի պետի ստորագրությամբ 2000թ. դեկտեմբեր ամսի քաղաքապետին ուղղված գեկուցագիրը՝ որ կարմիր խաչի կողմից բնակարանը հատկացվել է հինգ անձի, իսկ նախկին հասցեում բնակվողների թիվը՝ 12-ն է: Ըստ պատասխանողների վիճելի բնակարանը „կարմիր խաչի, միջազգային կազմակերպության կողմից իրենց արված նվիրատվություն է, որպես առաջին խմբի հաշմանդամ ունեցող ընտանիքի: Բնակարանը պետության միջոցներով կառուցված չէ, եւ հետեւաբար բնակարան հատկացնելիս եւ քաղաքապետարանը եւ մարզպետարանը չպետք է ղեկավարվեն ՀՀ կառավարության 1999թ. թիվ 432 որոշման պահանջներով:

Պատասխանողները վկայակոչում են Կառավարության 1989թ. թիվ 371 որոշումը՝ ըստ որի ընտանիքի առանձին միավոր, յուրաքանչյուր չափահաս անձ իրավունք ունեն առանձին հաշվառվելու հերթացուցակում: Հայցվորի ընտանիքը տեղափոխվել է այլ բնակավայր, ուստի եւ համաձայն Կառավարության 1999թ. թիվ 432 որոշման պահանջների, նա պետք է հաշվառումից հանվեր, առավել էւս որ հայցվորները ՀՀ քաղաքացիություն չունեն /ՌԴ քաղաքացի են/ եւ հետեւաբար համաձայն նույն որոշման, Հայաստանի Հանրապետությունում որպես երկրաշարժից անօթեւաններ բնակարան չպետք է ստանան:

Պատասխանող կողմը առարկություններ է ներկայացրել նաև հայցապահանջի իրավական հիմնավորման առումով վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14 եւ 277 հոդվածների առնչությամբ, պատճառաբանելով, որ հայցվորները ընդհանրապես որեւէ իրավունք չունեն տվյալ բնակարանի նկատմամբ:

Խնդրել են հայցը մերժել:

Հայցադիմումի պատասխանի դեմ հայցվոր կողմը ներկայացրել է առարկություններ, որ պատասխանողների կողմից բերված պատճառաբանություններն անհիմն են, չունեն որեւէ իրավական եւ փաստական հիմք:

1. Վերլուծելով իր կողմից որպես հայցի իրավական հիմնավորում վկայակոչած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14 հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերն ու 277 հոդվածը պատասխանողը ներկայացրել է, որ այս օրինադրությունները կիրառելի չեն, մոռանալով, որ օգտագործման իրավունքը չխախտվելու դեպքում ինքն իր ընտանիքով հանդիսանում է տիտուլային տիրապետող, քանի որ բնակարանը հատկացվել է նաև իր ընտանիքին, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278 հոդվածն ուղղակի նշում է, որ „Սույն օրենսգրքի 274-277 հոդվածներով նախատեսված իրավունքները պատկանում են նաև այն անձին, ով թեև սեփականատեր չէ, սակայն գույքը տիրապետում է օրենքով կամ

պայմանագրով նախատեսված հիմքով,։ Փաստորեն, պատասխանողները խաբեությանը իր ընտանիքին չեն թույլատրել օգտագործել օրինական հիմքով իրենց հատկացված բնակտարածությունը, իսկ հիմա փորձում են ներկայացնել, որ այդ իրավունքը չունեն, անգամ, զանց առնելով դատարան ներկայացրած իրենց ապացույցները: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14 հոդվածի կետերի նշմանը, ապա դրանք վերաբերում են հենց իրենց խախտված իրավունքների վերականգնմանը:

Ավելորդ չի համարում մատնանշել այն հանգամանքը, որ եթե պատասխանողները համոզված լինեին իրենց ճշմարտացիության մեջ՝ „որ բնակարանը հատկացվել է միայն իրենց, չէին փորձի ապացույցներ ձեռք բերել այն մասին, որ իր ընտանիքի անդամներից որեւէ մեկը կորցրել է բնակտարածություն ստանալու իրավունքը:

2. Պատասխանող կողմն ինքն է ներկայացրել ապացույց՝ Շիրակի մարզպետի տեղակալի 20.12.2012թ. թիվ 022/6223-12 գրությունը, որով ցույց է տվել, որ բնակարանը հատկացվել է 14 անձի, իսկ բնակարանների բաշխման նպատակով 2000թ. անցկացված վիճակահանության ցուցակները տրամադրել հնարավոր չէ, չունենալու պատճառով:

Սույն առարկություններին կից ներկայացնում է Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալի 01.02.2013թ. թիվ 1/2-09/423 գրությունը տրված Վահան Մադոյանին՝ նույն բնակարանի վյուս շահառուին, որում թվարկված է այն բոլոր անձանց, այդ թվում նաև իր ընտանիքի անդամների անունները, ում հատկացվել է բնակարանը:

Ինչ վերաբերում է տասներկու անձի մատնանշումով՝ բնակարանը հինգ անձի հատկացնելու վերաբերյալ գրությանը, ապա պատասխանողների կողմից ապացուցողական նշանակություն ունեցող այդպիսի որևէ փաստաթուղթ դատարան չի ներկայացվել: Այն, որ պատասխանողները դատարան են ներկայացրել 17.11.2000թ. զեկուցագիրը, որը „հանդիսանում է, Գյումրու քաղաքապետարանի ներքին „փաստաթուղթը, և հայտնի չէ թե ինչպես է հայտնվել պատասխանողների մոտ թույլատրելի ու հավաստի ապացույց հանդիսանալ չի կարող:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ հինգ անձի համար բնակության թույլտվությունը ձևակերպելու՝ կեղծելու հանգամանքով որևէ մեկը քրեական պատասխանատվության առաջ չի կանգնել ապա լուրջ այն պատճառով, որ այդ „բնակության թույլտվություն, տված անձը արդեն մահացած է, պատասխանողները շահարկում են այդ փաստաթուղթը մոռանալով, որ իր կողմից դատարան է ներկայացվել բնակարանի հատկացման բոլոր հիմքերը, որոնց բնօրինակները դատարանում ուսումնասիրվել են նաև պատասխանողի կողմից, որոնցով բնակարանի հատկացումը վերաբերում էր 14 անձի և առկա էր նաև այդ անձանց ցուցակը, չնայած, որ այդ ցուցակում էին հայտնվել նաև պատասխանողներից Անահիտ Հովսեփյանը, որը երկրաշարժի ժամանակ հաշվառված է եղել այլ հասցեով:

3. Ինչ վերաբերում է իր՝ ՀՀ քաղաքացի լինելու հանգամանքին, ապա ինքը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, որի համար ստացել է ՀՀ քաղաքացու անձնագիր, որն էլ հանդիսանում է ՀՀ քաղաքացի հանդիսանալու իր ապացույցը եւ ինքը որեւէ այլ ապացույց ներկայացնելու կարիքը չունի: Ավելին, հանդիսանալով ՀՀ քաղաքացի „Քաղաքացիության մասին, ՀՀ օրենքի 13 հոդվածով սահմանված կարգից օգտվելու

կարիքը եւս չունի, առավել եւս, որ այդ հողվածը վերաբերում է այն անձանց, ովքեր նոր են ցանկանում ՀՀ քաղաքացիություն ձեռք բերել: Իսկ երեխաները հանդիսանում են ՀՀ քաղաքացի, քանի որ թե ինքը, թե ամուսինը հանդիսանում են ՀՀ քաղաքացի և քաղաքացիության հարցում ՀՀ-ում գործում է արյան սկզբունքը, ավելին, երեխաները ծնվել, մեծացել և դպրոց են հաճախել Հայաստանում:

ԵՎ վերջապես, իր պահանջը բացառող վերաբերելի ու թույլատրելի ապացույց համարվել չի կարող պատասխանողների կողմից ներկայացրած ինչպես կոմունալ ծախսերին վերաբերող փաստաթղթերը, այնպես էլ „Փարոս“, համակարգին ու բժշկական հանձնաժողովին ներկայացնելու համար տրված տեղեկանքները, քանի որ կոմունալ հարմարությունները օգտագործել են պատասխանողներն իրենք և „Փարոս“, համակարգից էլ օգտվել են դարձյալ իրենց ընտանիքով: Ավելին, քանի որ բնակարանում փաստացի իրենք էին բնակվում տեղեկանքներում այդպես էլ պետք է նշվեր, իսկ եթե իր իրավունքները չխախտվեր կնշվեր նաև իրենցը:

Ելնելով վերոգրյալից, նկատի ունենալով հայցի հիմնավորումները խնդրել է իր հայցը բավարարել:

4. Երրորդ անձի դիրքորոշումը.

Երրորդ անձի Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչներ՝ Գ. Բաղդասարյանը և Ա. Հախվերդյանը գործի քննության ընթացքում ցուցմունքներ են տվել և հայտնել, որ հայցապահանջի դեմ առարկություններ չունեն:

Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետի 7/3 շենքը, այդ թվում նաև շենքի թիվ 17 բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը ի դեմս Շիրակի մարզպետարանի: Տվյալ շենքի բնակարանների այդ թվում թիվ 17 վիճելի բնակարանի բաշխումը իրականացվել է 2000թ. ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված կարգով:

Որոշման 2-րդ կետի համաձայն, բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն այն քաղաքացիները, եւ նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները երկրաշարժի հետեւանքով քանդվել եւ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի: Նույն որոշման 7-րդ կետի համաձայն, քաղաքացիների դիմումներն անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին մեկամսյա ժամկետում քննության են առնվում համայնքի ղեկավարի կողմից եւ դրա վերաբերյալ ընդունվում է որոշում:

Նշվածից հետեւում է, որ համաձայն որոշման բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցել են անօթեւան դարձած բոլոր քաղաքացիները՝ անկախ քաղաքացիությունից: Չնայած այն հանգամանքին, որ հայցվոր կողմն ունի ՀՀ անձնագիր, որը խոսում է ՀՀ քաղաքացիություն ունենալու մասին, այնուամենայնիվ անօթեւաններին բնակարան տրամադրելիս քաղաքացիության հարցը առաջ է քաշվել միայն 1999թ. թիվ 432 որոշման 2008թվականի սեպտեմբերի 11-ի փոփոխություններում, որը ոչ մի կապ չունի վիճելի բնակարանի հետ, քանի որ վերջինս հատկացվել է 2000թ. եւ հիմքում դրվել են ՀՀ կառավարության 1999թ. թիվ 432 որոշման պահանջները: Կորցրած Երեւանյան խճ. 93 շենքի թիվ 22 երեք սենյականոց բնակարանի դիմաց վիճելի բնակարանը տրվել է երեք սենյակի չափով / այսինքն նախկինում զբաղեցրած սենյակների թվից ոչ ավելի/ 14 անձի հաշվով, որում ներառվում են հայցվոր կողմի, պատասխանող կողմի եւ նրանց մյուս եղբոր՝ Վահան Մադոյանի ընտանիքները:

Մարզպետարանում պահպանվող եւ դատարան ներկայացված բնակարանային գործում առկա են ոչ միայն 2000թ. դեկտեմբերի 25-ի „բնակության թույլտվությունը,, 14 անձի հաշվով, այլեւ Գյումրու բնակտնտեսության կողմից տրված տեղեկանքը՝ 14 անձի առանձին-առանձին անվանակոչմամբ, նախաերկրաշարժյան հասցեում հաշվառված լինելու մասին նշումով:

Որպես տվյալ շենքի, այդ թվում նաեւ վիճելի բնակարանի սեփականատեր գտնում են, որ հայցապահանջը հիմնավորված է, եւ հայցվոր կողմն ունի լիարժեք բնակության իրավունք տվյալ բնակարանում:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1. Հայցվոր Ռուզաննա Վանիկի Մադոյանի թիվ ԱՄ 0544609 ՀՀ անձնագիրը, տրված 016-ի կողմից:

2. Անչափահասներ՝ Աննա եւ Արտյոմ Մադոյանների ծննդյան վկայականները՝ ծնված համապատասխանաբար 22.03.1995թ. եւ 29.02.1996թ.:

3. Բնակարանային գործի նյութերը՝ ա/ 25.12.2000թ. „բնակվելու թույլտվություն,, ըստ որի Ալեքսան Խաչատուրի Մադոյանին թույլատրվել է բնակվելու Տրդատ Ճարտարապետի փողոցի 7/3 շենքի թիվ 17 երեք սենյականոց բնակարանում ընտանիքի 14 անձի հաշվով:

բ/ „Գյումրու բնակարանային տնտեսություն,, ՓԲ ընկերության թիվ 025 տեղեկանքը՝ տրված 27.09.2000թ., 14 անձի առանձին-առանձին անվանակոչմամբ, նախաերկրաշարժյան հասցեում՝ Երեւանյան խճուղու 93 շենքի թիվ 22 բնակարանում հաշվառված լինելու մասին նշումով:

գ/ Թիվ 455381 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն, Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 բնակելի շենքը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

4. 30.09.2002թ. Գյումրու քաղաքապետարանի իրավաբանական բաժնի պետ՝ Օ.Գեորգյանի կողմից տրված գրավոր տեղեկատվության համաձայն, Երեւանյան խճուղու 93 շենքի թիվ 22 բնակարանը փոխհատուցվել է Ամերիկյան „Կարմիր խաչի,, Հայաստանյան ներկայացուցչության կողմից համաձայն ՀՀ կառավարության թիվ 432 որոշման, եւ տվյալ բնակարանի հարցը համարվում է փակված:

5. Քննիչ Կ.Գաբրիելյանի 10.08.2012թ. որոշման համաձայն, հայցվոր Ռուզաննա Մադոյանի դիմում-բողոքի վերաբերյալ ներկայացված նյութերով հիմնավորվել է, որ Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 բնակարանը հատկացվել է պատասխանող Ա.Մադոյանի 14 անձից բաղկացած ընտանիքին եւ այն չի սեփականաշնորհվել: Իսկ պատասխանող Անահիտ Հովսեփյանի /Մադոյանի/ մոտ գտնվող քաղաքապետարանի կողմից տրված 5/հինգ/ անձի վերաբերյալ փաստաթղթի պատճեն, որեւէ իրավունք չի վերապահում եւ պաշտոնական փաստաթուղթ չի համարվում:

6. 10.04.2012թ. Գյումրու քաղաքապետարանի բնակ.հաշվառման եւ բաշխման բաժնի պետի գրավոր տեղեկատվությամբ, ուղղված հայցվոր Ռուզաննա Մադոյանին, հիմնավորվում է, որ նրա ընտանիքին „Կարմիր խաչի,, կողմից վիճակահանությամբ հատկացվել է Տրդատ Ճարտարապետի 7/3 շենքի թիվ 17 երեք սենյականոց

բնակարանը եւ որպէս բնակարանով փոխհատուցված հանվել են երկրաշարժի հետեւանքով անօթեւան ընտանիքների բնակարանային հերթացուցակից:

7. Համաձայն Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալի 2013թ. փետրվարի գրավոր տեղեկատվության, Երեւանյան խճ. 93 փլված շենքի թիվ 22 երեք սենյականոց բնակարանը փոխհատուցվել է Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 երեք սենյականոց բնակարանով՝ 14 անձի հաշվով: Տեղեկատվությունում միաժամանակ թվարկվում են բոլոր 14 անձինք առանձին-առանձին, որում ներառված են հայցվորի, պատասխանողի եւ նրանց եղբոր՝ Վահան Մաղոյանի ընտանիքները:

6. Դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումը.

Դատարանը լսելով կողմերին, երրորդ անձի ներկայացուցիչներին, ուսումնասիրելով հայցադիմումը, հայցադիմումի պատասխանը, հետազոտելով բնակարանային գործում առկա եւ դատաքննությամբ ձեռք բերված գրավոր ապացույցները եւ յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանն ապացուցված է համարում, որ հայցվորն իր ընտանիքով, պատասխանող կողմը եւ նրանց եղբայր Վահան Մաղոյանն իր ընտանիքով մինչեւ երկրաշարժը բնակվել են Գյումրու Երեւանյան խճուղու 93 շենքի թիվ 22 երեք սենյականոց բնակարանում: Վերջինս երկրաշարժին կորցրել են եւ նշված բնակարանում հաշվառված ու բնակված անձինք դարձել են անօթեւաններ: Ընդգրկվելով անօթեւանների հերթացուցակում կողմերի, ինչպէս նաեւ նրանց մյուս եղբոր՝ Վահան Մաղոյանի ընտանիքը թվով 14 անձ Գյումրու Տրդատ Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 հասցեում ստացել են երեք սենյականոց բնակարան: Քանի որ այն հատկացվել է 14 անձից բաղկացած Մաղոյանների ընտանիքին եւ բնակության թույլտվություն է տրվել 25.12.2000թ., ուստի բնակարանի հատկացումն իրականացվել է համաձայն ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի /աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման վերաբերյալ/: Կարգի 2-րդ կետի համաձայն, բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն այն քաղաքացիները եւ նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները երկրաշարժի հետեւանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի: Նույն կարգի 7-րդ կետի համաձայն, քաղաքացիների դիմումները անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին մեկամսյա ժամկետում քննության են առնվում համայնքի ղեկավարի կողմից եւ դրա վերաբերյալ ընդունվում է որոշում: Իսկ բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում են վարձակալի եւ նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցրած սենյակների թվից ոչ ավելի: Փաստորեն, կորցրած 3/երեք/ սենյականոց բնակարանի դիմաց Մաղոյանները փոխհատուցվել են 3/երեք/ սենյականոց բնակարանով:

Այն, որ Տրդատ Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 3/երեք/ սենյականոց բնակարանը հատկացվել է Մաղոյանների 14 անձից բաղկացած ընտանիքին նախկինում կորցրած Երեւանյան խճ. 93 շենքի թիվ 22 3/երեք/ սենյականոց բնակարանի դիմաց, հիմնավորվում է երրորդ անձի՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի

ներկայացուցիչների կողմից ներկայացված եւ դատարանում հետազոտված բնակարանային գործի նյութերով, համաձայն որի վիճելի բնակարանը հատկացվել է Մաղոյանների 14 անձից բաղկացած ընտանիքին, եւ ոչ թե պատասխանող Ալեքսան Մաղոյանի 5 անձից բաղկացած ընտանիքին:

Քննիչ Կ.Գարրիեւյանի 10.08.2012թ. որոշման համաձայն, հայցվոր Ռ.Մաղոյանի դիմում-բողոքի վերաբերյալ նախապատրաստված նյութերով հիմնավորվել է, որ Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 բնակարանը հատկացվել է պատասխանող Ալեքսան Մաղոյանի 14 անձից բաղկացած ընտանիքին եւ այն չի սեփականաշնորհվել: Իսկ պատասխանող Անահիտ Հովսեփյանի /Մաղոյանի/ մոտ գտնվող քաղաքապետարանի կողմից տրված 5 անձի վերաբերյալ փաստաթղթի պատճեն որեւէ իրավունք չի վերապահել եւ պաշտոնական փաստաթուղթ չի համարվում:

Համաձայն բնակարանային գործում առկա Գյումրու բնակտնտեսություն ՓԲ ընկերության կողմից 27.09.2000թ. տրված թիվ 025 տեղեկանքի եւ Գյումրու քաղաքապետարանի 1/2 9/423 գրավոր տեղեկատվության, թվարկվում է այն անձանց շրջանակը /թվով 14/, որոնց Երեւանյան խճ. 93 շենքի թիվ 22 բնակարանի դիմաց „Կարմիր խաչի„ կողմից հատկացվել է Տրդատ Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 3/երեք/ սենյականոց բնակարանը: 14 անձանցից այժմ մահացած են երկուսը՝ Սիրուշ Ավետիսի Դազարյանը /2001թ./ եւ Լիանա Հարությունի Մաղոյանը /2011թ./:

Գյումրու քաղաքապետարանի բնակ.հաշվառման ու բաշխման բաժնի պետ Ա. Պապիկյանի 10.04.2012թ. 1/4-09/1349 հայցվոր Ռ.Մաղոյանին ուղղված գրավոր պատասխանի համաձայն, նրանց ընտանիքը Երեւանյան խճ. 93 շենքի թիվ 22 փլված բնակարանի դիմաց փոխհատուցվել է „Կարմիր խաչի„ կողմից վիճակահանությանը նրանց հատկացված Տ. Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 բնակարանով, որի հետեւանքով իսնվել են երկրաշարժի հետեւանքով անօթեւան դարձած ընտանիքների բնակարանային հերթացուցակից:

Գյումրու քաղաքապետարանի իրավաբանական բաժնի պետի 30.09.2002թ. գրավոր տեղեկատվության համաձայն, Երեւանյան խճ. 93 շենքի թիվ 22 բնակարանի վարձակալը Ամերիկյան „Կարմիր խաչի„ Հայաստանյան ներկայացուցչության կողմից համաձայն ՀՀ կառավարության թիվ 432 որոշման, ստացել է կորցրած սենյակների թվին համապատասխան բնակարան եւ կորցրած բնակարանի դիմաց բնակարանով փոխհատուցվելու հարցը լուծվել է:

20.12.2012թ. ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Ս. Պետրոսյանի պատասխանող Ա.Հովսեփյանին /Մաղոյանին/ ուղղված գրավոր պատասխանի համաձայն, 25.12.2000թ. տրված „բնակվելու թույլտվությամբ„ Տ. Ճարտարապետ փող. 7/3 շենքի թիվ 17 3/երեք/ սենյականոց բնակարանը հատկացվել է Մաղոյանների 14 անձից բաղկացած ընտանիքին:

Ինչ վերաբերում է պատասխանող կողմի այն պատճառաբանությանը, որ հայցվոր Ռ.Մաղոյանը եւ նրա ընտանիքի անդամները ՌԴ քաղաքացիներ են եւ հետեւաբար Կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման համաձայն չպետք է հատուցվեն բնակարանով, ապա Ռ.Մաղոյանի կողմից ՀՀ քաղաքացու անձնագիր ունենալու հանգամանքը ինքնին խոսում է նրա ՀՀ քաղաքացի լինելու մասին, իսկ կորցրած բնակարանի դիմաց նրանք փոխհատուցվել են 2000թ. եւ բնակարանի հատկացումը

կատարվել է 10.06.1999թ. թիվ 432 որոշման համաձայն, որում քաղաքացիության մասին խոսք անգամ չկա: Քաղաքացիության հարցը առաջ է քաշվել նշված որոշման 2008թ. սեպտեմբերի 11-ի թիվ 1024-Ն որոշմամբ կատարված փոփոխություններում, որպիսինը սույն դեպքում կիրառելի չէ:

Ի դեպ կողմերն առ այսօր հաշվառված են նախաերկրաչափության Երևանյան խճուղու 93 շենքի թիվ 22 հասցեում: Իսկ պատասխանողներից Անահիտ Հովսեփյանի եւ Ալեքսան Մադոյանի անձնագրերում առկա „փաստացի բնակվում է,, նշումը որեւէ իրավական հետեւանք չի կարող առաջացնել:

Պատասխանողների կողմից ներկայացված 12 անձի մատնանշումով բնակարանը 5 անձի հատկացնելու վերաբերյալ 17.11.2000թ. բնակրաժնի պետի զեկուցագիրը, որեւէ ապացուցողական նշանակություն ունենալ չի կարող, քանի որ այն հանդիսանում է Գյումրու քաղաքապետարանի ներքին փաստաթուղթը, իսկ պատասխանողները փաստաթղթի ձեռք բերման աղբյուրի վերաբերյալ ոչինչ չկարողացան հայտնել դատարանին: Ավելին, Տրդատ Ճարտարապետի 7/3 շենքի թիվ 17 բնակարանում կողմերի „բնակության թույլտվությունը,, տրվել է 25.12.2000թ. եւ հետեւաբար բնակրաժնի պետը նման զեկուցագիր չէր կարող ներկայացնել:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածի 2-րդ մասի՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները իրավաբանական ուժ չունեն եւ չեն կարող դրվել վճռի հիմքում:

Ինչ վերաբերում է Շիրակի մարզի առաջին աստիճանի դատարանի 09.03.2005թ. թիվ 2-657 օրինական ուժի մեջ մտած վճռին, ապա ճիշտ է վճռով ցույց է տրվում ,որ կողմերի եղբոր՝ Վահան Մադոյանի ընտանիքը բնակարան է ստացել Տրդատ Ճարտարապետի 7/3 շենքի թիվ 17 հասցեում եւ նրան պետք է վտարել այդ հասցեն, սակայն վճիռը վերաբերում է Վ.Մադոյանին ու Գյումրու քաղաքապետարանին եւ հայցվոր Ռ.Մադոյանի համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52 հոդվածի 2-րդ մասի համաձայն նախադատելի հանգամանք հանդիսանալ չի կարող:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13 հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը: Իսկ նույն օրենսգրքի 278 հոդվածի համաձայն՝ անձը իր տիրապետման պաշտպանության իրավունքն ունի նաեւ ընդհուպ ընդդեմ սեփականատիրոջ:

Ղեկավարվելով շարադրված հոդվածների դրույթներով եւ գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման:

Այնքանով-որքանով հայցվոր կողմը համաձայն 2000թ. դեկտեմբերի 25-ի „բնակության թույլտվության,, բնակության իրավունք ունի սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը /հանձինս Շիրակի մարզպետարանի/ պատկանող Տրդատ Ճարտարապետի 7/3 շենքի թիվ 17 հասցեում, ուստի անհրաժեշտ

է վերացնել խոչընդոտը, պատասխանող կողմին պարտավորեցնելով արգելք չհանդիսանալու հայցվորների նշված բնակարանում բնակվելուն:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 140 հոդվածներով, դատարանը .

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել: Վերացնել հայցվոր կողմի բնակության իրավունքի իրականացման խոչընդոտները, պարտավորեցնելով պատասխանողներին արգելք չհանդիսանալ նրանց կողմից Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 7/3 շենքի թիվ 17 բնակարանում բնակվելուն:

Պետական խորքի հարցը համարել լուծված:

Վճիռը կանոնվին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության կողմից, պարտապանի միջոցների հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկ ամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ

ԴԱՏԱՎՈՐ՝

Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ